

ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՅԱՆ

### **Խ. ՍԱՄՈՒԵԼԻԵԱՆԻ**

VI

Նախորդ գլուխներում մենք կանգ առանք այն հաւա-  
տավիքների ու մնապաշտութիւնների վրայ, որոնք հայ կը-  
րօնական աշխարհայեցողութեան մէջ կազմում են մեռեալ-  
ների պաշտամունքի ամբողջ շէնքը։ Առաջին հայեացքից  
կարող էր թուալ, որ այդ պաշտամունքը մեր ժողովրդի  
ներքին կեանքի նշանակութեան համար մի աննշան երևոյթ  
է, ուշադրութեան անարժան մի բան։ Սակայն երբ խո-  
րապննին ուսումնասիրում ենք հայ ժողովրդի մտաւոր—  
բարոյական կեանքը, վերլուծում ենք նրա հասարակական  
ձևերի ներքին բովանդակութիւնը, տեսնում ենք, որ մե-  
ռեալների կուլտը նշանաւոր դեր է խաղում հայերի սո-  
ցեալ—կուլտուրական զարգացման պատմութեան էջերում։  
Դարեր են անցել-դնացել հայ ընտանիքի զարգացման մէջ,  
փոփոխուել են նրա արտաքին ձևերը սոցեալ—տնտեսա-  
կան պայմանների աղեցնութեան տակ, բայց չեն փոփոխել  
նրա ներքին գոյութեան բաղկացուցիչ տարրերը, դեռ չեն  
յեղաշրջուել այն մտապատկերները ու ռամկական փիլի-  
սոփայութեան հայեացքները, որոնցով ղեկավարում էր  
հայ ընտանիքի մտաւոր-բարոյական կեանքը։

Կրօնական մտապատկերների ազդեցութեան ներքոյ  
մարդուս մէջ, կարելի է ասել, ծագում են արենակցական

1) «Ազգագրական Հանդէս» XII գիրք:

կապերի առաջին հասկացողութիւնները: «Երբ տնտեսական-  
և այլ պայմաններից առաջանում են սերնդական կազմա-  
կերպութիւններ, մանաւանդ հայրիշխանութիւնը, որտեղ  
բոլոր իրաւական հիմնարկութիւնները ստացած են, այսպէս-  
ասած, որոշ ձևեր, կրօնական մտապատկերները նշանաւոր  
չափով վերափոխում են: Խսկապէս այն տարրերը, որոնք  
նախորդ շրջաններում միմիայն ուրուագծուած էին և տա-  
կաւին չէին զարգացել չնորհիւ մարդկային խմբակցու-  
թիւնների անկատար կեանքին, սկսում են աւել շեշտակի  
ձևակերպուել և դուրս են վանում նախնական կրօնական  
աշխարհայեցողութիւն<sup>1)</sup>): Եւ ահա մեռեալների պաշտամուն-  
քը, հանգուցեալների հոգիների յիշատակի համար յաճախ-  
կատարուող երկրպագութիւնը փոխուում է և ընդհանրա-  
նում նախահայրերի պաշտամունքի, նախահօրը երկրպագե-  
լուն: Երկրպագելով իրենց նախահայրերին իւրաքան-  
չիւր մարդկային խմբակցութեան անդամները շաղկապ-  
ւում են սերտ կապերով, նրանց մէջ զարթնում է արե-  
նակցական ազգութեան գաղափարը, սերնդական միու-  
թեան ըմբռնումը:

Նախահայրերի կուլտը այսպիսով սկզբներում լոկ-  
սերնդական քնաւորութիւն էր կրում: Բոլոր սերնդա-  
կիցները, մանաւանդ ազնատական կազմի մէջ միա-  
ցած են լինում իրար հետ այն գաղափարով, թէ սերուած  
են մի նախահօրից, որին և հանապազ երկրպագում են,  
թէ իրենք ծագում են մի նախապերից, որը դառնում է  
նրանց պաշտամունքի կենդրօնական անձնաւորութիւնը:  
Սակայն ինչպէս առօրեայ սովորական կեանքում, նոյնպէս  
էլ անցեալի վերաբերմամբ նախնական մարդու միտքը թոյլ  
էր իրական յիշողութիւններով և ամեն ինչ պահպանուում  
էր նրա յիշողութեան մէջ գերբնական բացատրութիւննե-  
րով: Ուստի զարմանալի չէր, որ նախահօր գաղափարը  
ժամանակի ընթացքում մոռացութեան էր տրւում, նրա  
նշանակութիւնն իրբն մի աստուածային էակ, որ երբեմ:

<sup>1)</sup> Խարզին հատ II եր. 213.

տիրապետում էր նախնի սերնդակիցների մտածողութեան ու հաւատի մէջ, սկսում է աղօտանալ, նուազել նրա կրօնական ազդեցութիւնը, որ երեմն ահ ու սարսափ էր առաջացնում սերնդի անդամների մտապատկերների մէջ, այժմ գոյութիւն ունի լոկ իրրե մի յիշողութիւն, մի լեզնդա, ուր այդ նախահայրը հանդիսանում է հերոսի բայց ոչ աստուածային էակի գաղափարով. հերոսի, որը պահպանում է շատ անգամ ժողովրդի բանականութեան մէջ միսիայն նրանով, որ իր անունով է կոչւում ամբողջ ազգը, ամբողջ ժողովուրդը, որի անդամները երեմն կաղմում էին մի սերունդ:

Այսպէս են գօնէ բացատրում հին ազգերի դիւցարանութիւններ՝ օրինակ լաթինացոց, յոյների, հրէաների՝ զանազան սերնդների անունների նշանակութիւնները. Հայկական դիցարանութիւնն էլ բերում է մի շարք օրինակներ այդ ուղղութեամբ. Հայերի անունն առաջացել է, ինչպէս պնդում է մեր պատմագիր Մովսէս Խորենացին, Հայկ նահապետից. Հայկի սերնդից անջատուած որդիները, տեղափոխուելով նոր երկիրներ, նոր սերունդներ առաջացրին, որոնք կոչւում էին այդ նոր նահապետների անուններով: «Արմենակը» (Հայկի որդին) թողեց իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին բոլոր իրենց ընտանիքով, նոյնպէս և Մանավազի Բագ որդուն. Հարք կոչւուած տեղերում. Սրանցից Մանավազը ժառանգեց Հարքը. իսկ նրա Բագ որդին աղի ծովի հիւսիս-արևմտեան եզրը և գաւառին ու ծովին իր անունը դրեց. Սրանցից, ասում են, սկսուել են Մանավազեան, Բգնունի և Սլիունի անուանուած նահապետները: Իսկ Խոռը բազմացաւ հիւսիս-յին կողմերում և շէնքեր շինեց. Սրանից, ասում են, ըսկսուել է Խոռխոռունի աղգի մեծ նախարարութիւնը»<sup>1)</sup>. Վերջապէս մի բնորոշ փաստն էլ այն է, որ հին օտար ժողովուրդները հայերին անուանում էին Արմէն, Արամ նա-

<sup>1)</sup> Մովսէս Խորենացու պատմութիւնը, աշխարհաբար թարգմ. Խ. Ծ. Վ. Ստեփանէի. գիրք Ա. գլ. ԺԲ.:

հապետի անունով. նահապետի, որ օտարների աչքերում նոյն հերոսի նշանակութիւնն ունէր, ինչ որ իրենց սերնդի նախահայրերը<sup>1)</sup>:

Նախահայր-ցեղապետի կուլտը, որ կարող է արտայայտուել կամ ժողովրդի մտապատկերների մէջ ապօռող իբրև հերոսացրած անձնաւորութիւն կամ լոկ մի յիշողութիւն, թէ պատկանում են մի սերնդին, ծագել են մի ընդհանուր սերնդից՝ այդ կուլտը այնուամենայնիւ շարունակ փոփոխութ է, ընդունում զանազան նոր ձևեր։ Երբ ցեղը, սերունդը տնտեսական պայմանների ազգեցութեան տակ տարրալուծում է զանազան նոր խմբակցութիւնների, վերջինները իրենց նահապետների կուլտը սահմանափակում էին միմիայն նրանով, որ պաշտում, յիշատակում են լոկ մօտակայ հանգուցեալ հայրերին։ Սերնդակիցները հոգս են տանում և կատարում մեռեալների կուլտի համաձայն պահանջելիք ծէսերն ու սովորութիւնները միմիայն վերջերը մեռած, ժամանակով իրենց աւելի մօտիկ հանգուցեալների վերաբերմամբ։ Իսկ խոր հնութեան և աւելի ուշ ժամանակներում եղած սերնդակից մեռեալների յիշատակը պահպանում են նրանով, որ այդ բոլոր հին հոգիններին մի անունով, մի տիտղոսով են պատում, կոչելով «նախնիք» կամ «պապեր» նման հովովմէացիներին, որոնք իրենց սերնդական հին հանգուցեալներին անուանում էին manes, lares կամ նման յօյներին, որոնք նոյն այդ նշանակութիւնն էին. տալիս նախնիք» կամ «պապեր» բառերին։ Նոյն իսկ շատ ժողովրդների մէջ, ինչպէս լատինացոց մէջ տառ և այն, սովորութիւն կար այդ նախահայրերի յիշատակը յաւերժացնել, շինձլով կուռքեր և այլ նման արձաններ, որոնց տեղաւորում էին իրենց տանը, յատուկ սենեակում։

Ահա այս տեսակ պաշտամունքի մենք հանդիպում ենք հայ ժողովրդի կեանքում։ Արշակունի թագաւորական սերունդը համարում էր իրեն աստուածային գոյացումից

1) Անդ..

բղխած։ Այդ հիման վրայ հայ թագաւորները սովորութիւնն ունէին իրենց նախնիքների յիշատակը պահպանել զանազան արձանների կերպարանքով։ այդ արձանները յայտնին հայ պատմութեան մէջ «հայրենի կուռք» կամ «պատկերը նախնեաց» անուններով<sup>1)</sup>։

Նախնիքների, սերնդի նախահայրերի այդ կուլտը պահպանուել է նաև ժամանակակից հայ սովորութական իրաւունքի մէջ։ Ճիշտ է այժմս այլ ևս գոյութիւն չունեն կուռքերի և այլ արտաքին նիւթական կերպարանքներին երկրպագելու սովորութիւնը, բայց դրա փոխարէն պաշտամունքի առարկայ են դառնում այն օջախները, որոնք պատկանելիս են եղել կամ կառուցանուել են այդ նախահայրերից, նաև գերեզմանները, եթէ վերջիններս ժամանակների ընթացքում կարողացել են պահպանուել ժողովրդի, սերնդի յիշողութեան մէջ։ Բորչալիում Լոռիս-Մելիքեանների տոհմի մէջ մնացել է այդ սովորութիւնն իրեն որոշ պաշտամունք։ «Մրտնք իրենց նախահայր համարում են Ս. Օհան Օձնեցուն, որի աճիւնի վրայ եկեղեցի են կառուցել և նրա գերեզմանն էլ պաշտամ են, նրա հողը իրեն օխնութիւն, գեղ են գործածում համարեա ամեն տեսակ հիւանդութիւնների դէմ։ Նորապատկները, եթէ նոյն իսկ ուրիշ զիւղում կատարած լինեն պսակադրութիւնը, նախ և առաջ գնում են համբուրելու Օհան Օձնեցու գերեզմանը։ Ամեն տարի Զատկի կանաչ կիրակէին Լոռիս-Մելիքեան ամբողջ տոհմը տօնում է Ս. Օհան Օձնեցու տօնը, իրեն միջից դրամ հաւաքելով, հասարակական մատաղ է կտրում և պատարագ մատուցանում ու հոգեհանգիստ կատարում Ս. Օհան Օձնեցու գերեզմանի վրայ։<sup>1)</sup> Նոյն տեղը նմանապէս երկրպագելու տեղ է ծառայում Աղալօ Քալանթարեանի օջախը, որ աւանդա-

1) Մովսէս Խորենացի՝ հայոց պատմութիւն. գիրք Բ, դ. ե. գիրք Բ. գլ. խթ.

2) Ազգագրական Հանդէս, Բորչալուի գաւառ, Ե. Լալայեանի եր. 115.

բար համարւում է Քալանթարեան տոհմի նախահօր բնակացանը<sup>1)</sup>։

Գանձակի գաւառի շատ զիւղերում հարս ու փեսան, պսակադրութիւնից վերադառնալով, նախ ուղեղորում են համրուքելու զիւղի օջախից և ապա գնում տունն Գիւղի օջախը մի սովորական օջախ է, բայց որպէս ժողովուրդը հաւատում է, դա պատկանելիս է եղել զիւղի հիմնադրին և կամ առաջնակարդ ու երկար ժամանակ զիւղ կառավարող անձին։ Հումանիշ նշանակութիւն ունեն նաև Վարանդայի զիւղերի օջախները. այստեղ զրեթէ իւրաքանչիւր զիւղում կայ մի կամ երկու օջախ, որ սրբատեղի է համարւում. եկեղեցի չեղած զիւղում պսակի խորհուրդը թոնը և կամ այսպիսի օջախների վրայ է կատարւում։ Կիրակի և տօն օրերն էլ շատ կանայք գնում են, ուխտ են անում այդ օջախների վրայ։ Այս օջախները ժողովրդի աւանդութեամբ պատկանելիս են եղել զիւղի հիմնադիրներին։

Յետագայում հանգուցեալ նախահայրերի վերաբերմամբ գոյութիւն ունեցող սերնդական—կրօնական մտապատկերները սերնդի կամ ցեղի տարրալուծմամբ սկսում են սեղմուել և շրջափակուել։ Սերնդական կրօնը փոխարկում է ընտանեկանի. սերնդական պաշտամունքը, որ մի ժամանակ միացնում, շաղկապում էր սերնդին պատկանող բոլոր անդամներին, վերափոխուում է ընտանեկան կուլտի, աւելի լաւ ասած՝ գերդաստանական կրօնի։ Այդ ընտանեկան պաշտամունքը պարտաւորեցուցիչ բնաւորութիւն է կրում միմիայն ընտանեկան համայնքի բաղկացուցիչ տարրերի համար, որոնք պաշտում, յիշատակում են, ինչպէս և մի ժամանակ սերնդական կազմակերպութիւնները, բացառապէս իրենց, միմիայն սեփական գերդաստանին պատկանող ոգիներին, իրենց հովանաւորող նահապետներին։ Ծնտանեկան պաշտամունքը, գերդաստանական կրօնը դարձաւ նախնական ընտանիքի կազմի հիմ-

1) Անդ.

քը, նրա իրաւական ու բարոյական կեանքի ղեկավարը։ Այդ պաշտամունքը զարդացրեց հաւատալիքների ու կրօնական մտապատկերների մի շտեմարան, որով կարդաւորւում էին հասարակական յարաբերութիւնները թէ հին ժողովրդական կեանքում և թէ ներկայումս, որտեղ տակաւին տիրապետում է սովորութեան իրաւունքը։ Ըստանեկան այս պաշտամունքի մէջ ամենազլաւորն ու ամենաէականը օջախի կուլան է։

## V

Օջախը ընտանիքի գաղափարի մարմացումն է։ Ժողովրդական լեզուի մէջ ընտանիքը կոչւում է «օջախ»։ ուրեմն այդ երկու բառերը հոմանիշ նշանակութիւն ունեն։ Հին յոյներն էլ ընտանիքը անուանում էին Շուտուուր որ բառացի թարգմանութեամբ կը նշանակէ օջախի շուրջը (Շուտ—օջախ)։ Նախընթաց գլխում ցոյց առւինք, թէ սերնդական պաշտամունքը կենդրօնանում է սերնդական օջախի վրայ, որն ըստ աւանդութեան կառուցուած է լինում սերնդի նախահօրից։ Եւս առաւել սրբազան նշանակութիւն պիտի ունենան ընտանեկան օջախները, որոնք երբ նկատի առնենք, թէ ընտանեկան պաշտամունքը զարդացել է սերնդական, ցեղական պաշտամունքից, պէտք է իրենց մէջ պարփակէին այն գաղափարը՝ թէ կառուցուած են եղել ընտանիքի նախահօր, նահապետի ձեռքով։ Այդ օջախները կազմում են ընտանիքի հիմնադիրների կենդանի արձանները։

Զը կայ հայ ժողովրդի մէջ մի տուն, որ չունենայ իւր օջախը անշէջ կրակով։ Այդ օջախի շուրջն է կենդրոնանում տան թէ տնտեսական և թէ բարոյական—հոգեոր կեանքը։ Մարած է օջախը—ոչնչացած, խորտակուած է ընտանիքը։ Այդ գաղափարն են պարունակում իրենց մէջ հայ ժողովրդի բերանում տարածուած անէծքներն ու օրհնանքները։ «Քանդուի օջախոդ» և «օջախոդ հանդչի», «օջախիդ ծուխը կտրուի, վերանայ մնայ»,

«Քո հօրդ օջախը քանդուէր՝ գու միջից զուրս չըգայիր», «Օջախիդ անկոտրում սուն դառնաս, որդի», «Օջախիդ մուխն ու ծուխն անպակաս էնիք»: Երդումներ. «Ստի օջախը Աստուած մարէ, անցկացնէ», «Օջախս մարի; թէ խօսքս յետ առնեմ, չկատարեմ», «Եէն օջախիդ մոխիք որ ըլնեմ, ինձ համար հերիք առ: Օջախի և ընտանիքի հոմանիշ նշանակութիւնն երևում է և մի շարք սովորութիւններից, որոնք հայ ժողովրդի կեանքում այնքան ամուր են արմատացած, որ մինչեւ օրս տեսնում ենք նրանց իրական ոյժը: Նոր տուն շինելիս առաջին անգամ հին տան օջախից են վերցնում կրակը, այն էլ տան ամենամեծի ձեռքից և ապա տանում են նոր տունը և առաջին անգամ նրանով վառում նոր օջախը, որով և սկսում է նորակազմ ընտանիքի կեանքը: Ժողովրդի կարիքով այս նոր բաժանուող գերդաստանի կեանքը շարունակութիւնն է հին գերդաստանի, ուրեմն օջախն էլ միենոյնը պիտի լինի: Նոյն այդ գաղափարն են ներկայացնում այն խօսքերը, երբ աղջիկ ուզելու գնալիս առում են. «Մենք եկալ ընք մըն հափուր մոխիր եր օնինք քու օջախէդ, տանենք մեր օջախին նհետ խառնենք»<sup>1)</sup>: Նոյն նշանակութեամբ խօսքեր են ասում Սիսիանում. «Երբ գանք ձեր բարի օջախէն մին ճրագ կպցնենք»:

Ժողովուրդը, հաւատալով, որ օջախը կառուցուած է նախահօր, տան նահապետի ձեռքով, ընականաբար օջախի հետ պիտի միացնէ և այն սրբազան յիշատակը, որ տածում է դէպի իւր ընտանեկան նախահայրը, նահապետները, որոնցից առաջացել, սերուել է ներկայ ընտանիքը: Օջախը դառնում է մի սրբազան յիշատակարան, նոյն իսկ նրա հետ կապուած և միանգամայն խառնուած է ընտանեկան նահապետների կուլար: Օջախի այս տեսակ սուրբ նշանակութիւնը գտնում ենք հին յունաց և հռովմէացոց պատմութեան մէջ, Հին կլասիկ գրողների յիշատակիների մէջ ստէպ գտնում ենք, որ նրանք միենոյն ի-

<sup>1)</sup> Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ, եր. 105—106.

մաստով են ըմբռնում օջախի և ընտանեկան աստուածների նշանակութիւնը։ Յոյներն իրենց ընտանեկան աստուածներին անուանում էին չեքստու կամ չետանչուկերօնը ոչ մի տարրերութիւն չէր գնում օջախի ու պինաստների (ընտանեկան աստուածներ) միջն։ Նոյնպէս է հասկանում և Վիրդիլիոսը իր «Էնէական» քերթուածքի մէջ, երբ Էնէասը փոխաղրում էր իւր հետ սեփական տան օջախը, վերջինիս նա անուանում էր Լար (lares—տնային աստուած)։ Ասսարակի անունով, որով այդ օջախի մէջ կարծես Էնէասը տեսնում էր իւր նախահօր հոգին։ «Ռւստի—ասում է Ֆիւստէլ դը Կուզանժը—պէտք է եղրակացնել, որ տան օջախը սկզբներում մեռնեալների պաշտամունքի հանգանակն էր և օջախի քարի տակ հանգչում էր նախահայրը, այդ տան հաստատողը՝ ահա այդ նախահօր յիշատակին էր վառում կրակը օջախի վրայ, և այդ օջախը իւր կրակով յաւէտ կանգուն էր պահում նրա յիշատակը և ներկայանում էր իրրեն նրա հանապաղ արթուն հոգին»։

Նահապետական պաշտամունքի տեղականութեանց շնորհիւ է, որ օջախի կուլտը մասցել է մինչև օրս և այնպիսի մեծ սրբութեամբ պաշտուում ժողովրդի մէջ, որ շատ տեղ ոչ մի տարրերութիւն չեն գնում օջախի և եկեղեցու միջն։ Օջախը մի սրբազն տեղ է, մի սրբութիւն է, որին երբեք պղծել, կեղտոտել չի կարելի։ Եկեղեցի չեղած զիւղերում եկեղեցական խորհուրդները՝ պըսակ, մկրտութիւն և այն կատարում են օջախի կամ թոնրի վրայ։ Խնչպէս վերը տեսանք, շատ տների օջախները նոյն իսկ ուխտատեղերի նշանակութիւն են ստանում։

Ի դէպ, այստեղ յիշենք, որ այժմ շատ զիւղերում օջախներ չեն շինուում, այլ թոնրիներ, որոնք ընտանեկան տնտեսութեան մէջ նոյն դերն են կատարում, ինչ և օջախը։ Ահա այդ թոնրի վրայ հայ զիւղացիք նոյն հայեացքներով ու հաւատալիքներով են նայում, ինչպէս և օջախի

վրայ. կարելի է ասել, որ օջախի պաշտամունքի հետ կապուած բոլոր սովորութիւններն ու ծէսերը անցել են թոնրի կուլտին. ներկայումս օջախն ու թոնիրը միևնույն նշանակութիւնն ունեն ժողովրդի աչքում:

Պարզ է, որ օջախը, լինելով մի սրբութիւն, որի հետ կապուած է ընտանիքի գոյութիւնը, պիտի կանգուն և անխախտ մնայ ու ազատ որև է խորտակիչ հանգամանիքներից. Ուրեմն ընտանիքի անդամների վրայ դրած է մի պարտականութիւն՝ հոգ տանել օջախի կանգունութեան և յարատելութեան վրայ<sup>1)</sup>: Եյդ պարտաւորութիւնը ընտանաբար պատկանում է տան մեծին, տանուտէրին, որ ուղիղ գծով սերւում է տան նախահօր զարմից, նախահօր, որ կառուցել է առաջին անգամ այդ օջախը: Հայրենական օջախ և տանուտէր, ընտանեկան օջախ և տան նահապետ՝ սա իրարից անբաժանելի հասկացողութիւններ են, որոնք ընտանիքի գոյացման առաջին օրերից 'ի վեր պահպանուել են հայ ժողովրդի աշխարհայեացքում: Այս հասկացողութեան վրայ է հիմնուած patria potestas-ի՝ հայրական իրաւունքի գաղափարը, որ այնպէս սրբագործուած ու անշեղ տիրապետում է նահապետական ընտանիքում:

Patria potestas-ը ընտանիքի յարատելութեան նիւթական գրաւականն է, որը օջախի պաշտամունքի մէջ ստանում է հոգևոր-բարոյական հասկացողութեան նշանակութիւն: Ժողովրդի ըմբռնումով՝ միայն pater familiæs-ը, ընտանիքի նահապետը, տանուտէրը կարող է այդ օջախի սրբութիւնը պահպանել, որով և կը պահպանուի ընտանիքի կանգունութիւնը: Ահա այս տեսակէտից ընտանիքը շահազրգուուած է, որ նահապետի սերնդական զարմը չը կտրուի, չանհետանայ. ուստի անհրաժեշտ է, որ արու զաւակներ ծնուեն: Հակառակ դէպքում patria potestas-ի ներկայացուցչի չգոյութեամբ կը վերանայ օջախի պաշտամունքը, ուրեմն և ընտանիքի յարատելութիւնը: Թէ ինչու արու զաւակները, այսինքն տղամարդիկ և ոչ կա-

1) Համեմ. մեր այս յօդուածի սկիզբը «Ազգ. Հանդ. գ. Խլ:

նայք են լինելու օջախի պաշտպանները — դա բացատրւում է հին ժողովրդների մէջ տիրապետող պաշտամունքների պատմութիւնից:

Ինչպէս արդէն առիթ ունեցանք վերը շեշտելու, օջախի պաշտամունքը սերտ կազ ունի մեռեալների պաշտամունքի հետ. իւրաքանչիւր մեռեալ հանդերձեալ կեանքում սպասում էր իւր ժառանգներից միայն, որ հոգ տանեն իւր յիշատակը յարգելու<sup>1)</sup>. որդիները պէտք է յիշատակէին միշտ իրենց հայրերին. Յոյներն այս գաղափարը արտայայտելու համար գործածում էին մի շատ բնորոշ բառ ուժում ինչպէս և լաթինացիք նոյնիմաստ parentare բառը, որովհետև մեռելներին յիշելիս նրանք դիմում էին միշտ իրենց հանգուցեալ հայրերին, ընտանիքին նախահայրերին. Խոկ նախահայրերին պաշտում էին միայն արնական զծով — այն հասկացողութեամբ, որ միայն այրն, տղամարդն է օժտուած խորհրդաւոր բնական մի ուժով, այն է արգասաբեր, պտուղ արտադրող ընդունակութեամբ: Բացի այդ՝ անպայման պահանջւում էր, որ մեռեալների յիշատակոյները, հանգուցեալների հանդերձեալ կեանքի մասին հոգ տանողները լինէին նրանց արենակից, ուղղակի ազգականները. օտարները իրաւունք չունէին այդ պարտականութիւնները իրենց վրայ վերցնելու, հակառակ դէպօտում հանգուցեալների հոգիները բարկանում էին և մեծ չարիքներ կարող էին բերել ուղղակի ազգականների զլիքն: Այսպէս էր հին Հնդկաստանում, Յոյների և Լաթինացիների մէջ: Նոյն այդ գաղափարը տիրապետում էր հայերի մէջ և այժմս էլ տիրապետում է:

Բորչալիում զաւակ և մասնաւորապէս արու զաւակ չունեցող ընտանիքը մեծապէս վշտանում է, որ իւր օջախու պիտի հանգչի, որ իւր գերեզմանն օրհնող չպիտի լինի, որ իւր ընտանեկան անունն այլ ևս ոչ ոք չպիտի

1) Ե. Լալայեանի՝ Բորչալուի գաւառը՝ «Ազգագր. Հանդ» գ. XI, երես 132.

կրէ<sup>1</sup>): Գանձակի գաւառում հայերը կարծում են, որ արու զաւակը տան սիւնն է, ծերութեան նեցուկը, օջախի վաս պահողը, ծնողների յիշատակ պահպանողը, նրանց գերեգ-ման օրնել տուողն է<sup>2</sup>):

Արու զաւակի, մանաւանդ անդրանիկ արուի ծննդի անհրաժեշտութիւնը մի համատարած, խոր արմատացած դաղափար է հայ ժողովրդի աշխարհայեացքի մէջ։ Հէնց այդ պատճառով ժողովրդի սովորութական իրաւունքը թոյլ է տալիս ապօրինի կամ երկրորդ կնոջ հետ ազլելու պահանջը, երբ օրինաւոր կինն ամուլ է կամ շարունակաբար աղջիկներ է ծննդաբերում։ Այս տեսակ կնապահութիւնը թոյլատրում էր նաև հին հոռվմէական օրէնքով, որ յայտնի էր concebinat անունով։ Գանձակի գաւառում ամուլ կնոջ ամուսինը մի երկրորդ կին է բերում յատկապէս երեխայ ունենալու նպատակով և հասարակական կարծիքը, որ ընդհանրապէս դատապարտում է ապօրինի կնապահութիւնը, այսպիսի դէպքերում շատ ներողամիտ է գտըն-ւում<sup>3</sup>)։

Ժողովրդի հասկացողութեան մէջ այս տեսակ ապօրինի կենակցութիւնը ու միայն արու զաւակ՝ ունենալու դաղափարն է իւր մէջ պարփակում, իրեն օջախի յարատեսութեան անհրաժեշտ պայման, ուստի նա ստանում է որոշ խորհրդաւոր նշանակութիւն։ Concebinat-ը կատարում է մեր սովորութական իրաւունքի համաձայն, որոշ ծէսերի ու սովորութիւնների պահպանողութեամբ։ Գըրւում են պայմանագրեր, հրաւիրում են վկաներ, զնում են նոյն իսկ եկեղեցու գուռը կենակցութեան, փոխադարձ համաձայնութեան երդումը կռելու։ Այս կենակցութեան դաղափարը, ինչպէս երեւում է, գոյութիւն է ունեցել հայոց հին պատմութեան շրջանում և շարունակել է զարդանալ մինչև մեր օրերը։ Այդ սովորոյթը նոյն իսկ որոշ

1) Նոյն՝ Գանձակի գաւառ, եր. 59.

2) Նոյն՝ Գանձակի գաւառ. հատ. Բ, եր. 43.

3) Անդ.

իրաւաբանական նշանակութիւն է ստանում և տեղ գրանում Մխիթար Գօշի հայոց գատաստանագրքի մէջ։ Դատաստանագրքի առաջին մասի Փ. գլխում կարդում ենք. «Ապա եթէ յաղագս անժառանգութեան տեսանիցէ զայրն տրտմեալ ու ցաւակցեալ ըստ օրինակին Աքրահամու և Սառայի, տացէ համարձակութիւն առնուլ կին՝ առցէ, բայց մի լիցի զամուլ և ծննդեան ի միասին պահեր։ Concupinat.ի գոյութիւնը հայ սովորութական կեանքի մէջ թէ Կովկասի և թէ Տաճկահայաստանի հայերի մէջ ստացել է հասարակական-ժողովրդական սանկցիա. սա արտայայտում է այն պայմանագրերից, որոնք շատ անզամ գըրաւոր կերպով կազմւում են կենակցող զոյգի երկու կողմի միջև։

Այսպիսի բնորոշ պայմանագրերի պատճեններ քանից լոյս տեսան մեր ընթացեկ մամուլի էջերում. շատ հետաքրքիր է այդ տեսակ պայմանագրերից մէկը, որ գտել է պ. Ե. Լալայեանը Գանձակի գաւառի Գետաշէն գիւղում։ Առաջ ենք. բերում այդ պայմանագրի բնորոշ կոտրները. «Ես նէրքոյ անվանեալ յէլիսէքոդպօլու կավառի ի գողն Գէտաշէնու բնակիչ Գրիգոր Ղահրամանովս տալիս եմ իմ հօժար կամովս իմ թոռ Մարգարիտ Յարութիւնովին քեզ Բը ջերեցի Բէկլար Աւանէսովիդ գոնոջ տեղ, որ դանես քեզ մօտ պահես մինչև Մարգարիտ Յարութիւնովի մահն. եթէ իցէ որ մէկ բակասութիւն բադայի մեր մէջ ես Բէկլար Օվանեսովս բարդաւորվում եմ 100 մանէթ. տալ Յարութիւնովիդ և թէ Աստուած տայերախայք լինի այն ժամանակ բեղկէ այս բայմանաթուղթը ոչնչանայ մենք մեանք սրբութեամբ մինչև մեր երկուսիս մահը, ինչպէս որ նա ինձ գին եւ նրան մարդ, թէ իմ աւանեսովիս առաջի գինը ոխջանուի ես պարտ եմ Մարգարիտի հետ պակվել և թէ մարգարիտ յարութիւնովն մեռնի ես աւանեսովս բարդ եմ իմ խարջովս թաղեմ... և բեղկէ ոչնչանայ այս բայմանաթուղթը»<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Ազգագրական հանդէս՝ Բորչալուի գաւառ, հատ X, եր. 136

ժառանգ, առաւելապէս արու զաւակ ունենալու զա-  
ղափարը պարփակւում է նաև տնինսայութեանն և որդե-  
ղբութեան սովորութիւնների մէջ. Հայ ժողովրդի մէջ մի  
ընդհանրացած սովորութիւն է, երբ որևէ բնտանիք չու-  
նի ոչ մի արու զաւակ, այլ միայն աղջիկ ունի, տնինսայ  
է բերում. իրենց աղջկան ամուսնացնում են այնպիսի  
երիտասարդի հետ, որը յօժարւում է բաժանուել միան-  
գամայն իր հօր տնից, ընտանիքից և, պսակուելով աղջը-  
կայ հետ, ընդունում է աղջկայ հօր ազգանունը, տեղա-  
փոխում է ընակութեան համար աներանց տունը. մի  
խօսքով՝ դառնում է աներանց օջախի անդամ, գերդաս-  
տանի արու ժառանգը: Խսկ այն դէպքում, երբ չեն ունե-  
նում ոչ մի զաւակ, գերդաստանը դիմում է որդեգրու-  
թեան: Սովորաբար որդեգրում են ազգականներից մէկին:  
Որդեգրուողին անց են կացնում երեք անգամ տամատիրու-  
հու շատկի միջով ամուսնու ներկայութեամբ: Այս ծիսա-  
կատարութիւնով սովորութական իրաւունքը կարծես ու-  
ղում է սիմբօլիական: Ճեռվ ներկայացնել, թէ որդեգիրը  
իրը ծնուռում է այդ կնոջից, ուստի այսուհետև կարող է  
անուանուել այդ օջախի զաւակ: և ստանալով այդ ընտա-  
նիքի ազգանունը՝ դառնում է նրա անմիջական ժառանգը<sup>1)</sup>:

## VI

Կերը առաջ բերած միջոցներով հայ ժողովուրդը նա-  
խանձախնդիր էր միշտ արու զաւակ՝ ընտանիքի ժառանգ  
ունենալու հարցը յաջող լուծելու: Այդ եղանակով սովո-  
րութական իրաւունքը հսարաւորութիւն էր տալիս անշեղ  
պահպաններու օջախի կուլտը, յարատեռութիւն տալ ընտա-  
նիքի գոյութեանը, որով իրը պահպանում էր նաև նրա  
մեռեալների գոյութիւնը միւս աշխարհում:

Օջախը այսպիսի մեծ նշանակութիւն ունենալով ըն-  
տանեկան կազմի մէջ, դառնում է մի կենդրօն, որի շուր-

1) Зелинскій—Народно-юридические обычаи у армянъ, եր.  
7. Ե. Լալայեան՝ Բորչալուկ գաւառ, և Ազգագր. հանդ. զիրք Խ. Եր. 132

Ձը պատում է ամբողջ գերդաստանական կեանքը և կատարւում է ամբողջ գերդաստանի գոյութեան պատմութիւնը։ Օջախի հետ են ամրացած գերդաստանի անդամների անձնաւորութիւնները, օջախի հետ է շաղկապուած գերդաստանին պատկանեալ այլ շնչաւոր և անշունչ առարկաների ներկայութիւնը։ Ուստի խրաբանչիւր նոր երևոյթ ամեն մի նոր գործողութիւն, որ կարող է տեղի ունենալ գերդաստանի կեանքում, միշտ կապում են օջախի՝ ընտանեկան գոյութեան այդ նշանաբանի հետ։ Եւ այդ օջախի պահապանը՝ տան մեծը, տանուտէրը՝ միշտ աչալուրջ հետևում է, որ սրբութեամբ կատարուեն այն ծէսերն ու կարգերը, որոնք կցորդ են օջախի պաշտամունքի հետ։— այն օջախի, առանց որի, ըստ ժողովրդական փիլիսոփայութեան, անկարեցի է ըմբռնել ընտանիքի ինքնուրոյն գոյութիւնը։ Մտնում է կամ աւելանում է մի նոր անդամ գերդաստանի մէջ, պակասում է կամ հեռանում ընտանիքի անդամներից մէկը՝ կատարուում են որոշ ծէսեր օջախի առաջ։ ծեռք են բերւում գերդաստանի համար նոր անասուններ և տնտեսական կեանքին վերաբերեալ նոր առարկաներ—կրկին կատարուում են որոշ ծէսեր օջախի առաջ։ Այստեղ հայը մտածում է, որ օջախը, լինելով գերդաստանի նախահօր յիշատակը, սրբազն արձանը, ներկայ գերդաստանական կեանքի հովանուրողն ու պաշտպանն է։ Օջախի մէջ անձնաւորուում է ընտանիքի էութեան դադափարը, օջախի մէջ է կենդրօնանում ընտանիքի սկիզբն ու վախճանը։ Ամեն ինչ պէտք է կատարուի, անցնի օջախի վրայով, որպէսզի նախահայրերը, միշտ տեսնելով, որ իրենց օջախները տակաւին շարունակում են կանգուն մնալ, տարածեն իրենց հոգածողութիւնն ու օգնութիւնը իրենց կենդանի մնացած սերնդակիցների վրայ, պահպանեն ամբողջ սերնդի, իրենց զարմից, արիւնից առաջացած ժառանգների կեանքը։ Այդ նախահայրերը կարող են զայրանալ, շատ բարկանալ, երբ տեսնեն, որ իրենց օջախի շուրջը պտտում են օտար, իրենց արեան խորթ անձինք,

որ այդ օջախին ձեռք են տալիս իրենց սեղնդին չպատկանող էակներ ու առարկաներ:

Այդ նպատակով ահա գերդաստանի տաճնութէրը, նաև հապետը, որպէսզի չպղծուի օջախը և տան վրայ շիջնի նախահայրերի զայրոյթն ու բարկութիւնը, միշտ դիմում է որոշ ծիսակատարութիւնների: Ներմուծուող ու աւելացող նոր անդամը, որպէսզի համարուի այդ գերդաստանի բաղկացուցիչ մասն և իրաւունք ունենայ յարելու գերդաստանի սերնդական նախահայրերի կուլտին, անշուշտ պէտք է հայցէ վերջինների գութը, պէտք է զիմէ նրանց, որ իրեն էլ ընդունեն իրեւ սերնդակից: Եւ այդ բոլոր ծիսակատարութիւններն ի հարկէ կատարում են օջախի՝ նախահայրերի այդ կենդանի ու պրազան արձանի առաջ. օջախի, որ սերնդական գաղափարի մարմնացումն է, ներկայ գերդաստանի դոյութեան նշանաբանը:

Այդ հիման վրայ հին ընտանեկան պաշտամդնքը պահանջում էր անպայման, որ միայն օջախի ներկայութեամբ կամ օջախի առաջ ծնուածը իրաւունք ունի ծառայելու այդ օջախին: Սովորութական իրաւունքի մէջ պահպանուել են այս տեսակ հայեացքներ: Բորչալիում տղաբերքը օջախի մօտ է կատարուում<sup>1)</sup>: Գանձակի գաւառում «ծնունդը կատարուում է օջախի մօտ, ծննդկանի երեսը դէպ արեւելք դարձրած: իսկ զիշեր ժամանակ, երբ տան անդամներին չի կարելի հեռացնել, որպէսզի ծննդկանը օջախի առաջ ազատուի, ծննդաբերութիւնը կատարուում է տան մի անկիւնում, որ կարպետներով առանձնացրած է: այստեղ բերում և դնում են օջախից մօխիր, որի վրայ էլ կատարուում է ծննդաբերութիւնը<sup>2)</sup>: Նոյն այդ իմաստն է պարունակում իր մէջ և այն սովորութիւնը, որ շատ տեղերում երեխայի մկրտութիւնը կատարում են եկեղեցու փոխարէն օջախի կամ թոնրի վրայ:

<sup>1)</sup> Ե. Լալայեան՝ Բորչալիուի գաւառ, «Ազգագր. Հանդ.» գիրք Խ; երես 184:

<sup>2)</sup> Նոյն Գանձակի գաւառ, հատ. Բ. երես 48:

Բնոտանիքի անդամը ամուսնանալով, բերում էր գերդաստանական համայնքի մէջ մի նոր անդամ՝ մի կին, որ մինչև այդ պատկանում էր մի այլ ընտանիքին, երկրպագում, ծառայում էր իր նախորդ ընտանիքի նախահայրերի հոգիներին, պաշտում էր նախակին տան օջախը. Բայց ահա այժմ այդ կինը մտնում է մի օտար ընտանեկան շրջան, բոլորովին իրեն խորթ պաշտամունքի միջնորդ. Նա երկրպագելու, պաշտելու է մի նոր օջախ. Փեսացուն, պըսակուելով ստիպուած է բաժանել իր կնոջ հետ սեփական ընտանիքի կուլտի ու հաւատի բոլոր կանոնները, կրօնական բոլոր ծէսերը, որոնք կազմում են իր ընտանիքի յարատեռութեան ու անշէջ գոյութեան միակ գրաւականները, այն թանգագին աւանդը, որ իր սերնդի նախահայրերը ժառանգել են սրբութեամբ ու կտակել են պահպանելու և ազատելու ամեն մի օտար ձեռքից պղծուելուց. Ուստի հարկաւոր էին որևէ սրբազն ծէսերով նորամուտ հարսին նոր ընտանեկան կուլտին մասնակցելու իրաւունք տալ, հարկաւոր էր մօտեցնել ու ընտելացնել այն պաշտամունքին, որին նա պէտք է ենթարկուի այժմ. Որպէսզի նա կարողանայ երկրպագել և ծառայել նոր օջախին, կարողանայ նրա կրակի պահապանը դառնալ, անհրաժեշտ էր որոշ ծիսակատարութեամբ իրականացնել այն կապը, որ հաստատուելու էր օջախի և հարսի միջև. Այդ նպատակով էլ լատինացիների և յոյների մէջ պօսկի մի խորհրդաւոր սովորութիւն գոյութիւն ունէր, որ բաղկացած էր երեք գործողութիւններից. traditio, deductio in dominum, confarreatio.

Առաջին գործողութիւնը կայանում էր նրանում, որ աղջկայ հայրը նորափեսայի և ազգականների ներկայութեամբ ընտանեկան օջախին գոհեր էր մատուցանում և իր patria potestas-ի իրաւունքով պատ էր կցուցանում և բաժանում իր աղջկան հայրական օջախի պաշտամունքից, իւր ընտանեկան հաւատալիքներին ենթակայութիւնից. Այս ծէսով աղջիկը խզում էր ընդ միշտ իր կապը

հայրենական օջախից: Երկրորդ գործողութիւնը պարփակում էր իւր մէջ այն բոլոր ծիսակատարութիւնները, որոնք անհրաժեշտ տեղի են ունենում նորապսակների աղջկայ հօր տանից գուրս գալու վայրկեանից մինչև տղայի տան շէմքը հասնելը: Այս գործողութեան մասին երկար կանգ չենք առնում, որովհետեւ մեր նիւթին այնքան էլ չեւ վերաբերում: Երրորդ գործողութիւնը ներկայացնում է առաջին գործողութեան հակառակ իմաստը: Նորահարսը նորափեսայի կամ սրա հօր ձեռքով մօտեցւում է իւր ամուսնու տան օջախին և կանգնում էր սրա առաջ: Նորահարսի վրայ սրսկում են օրհնած ջուր, որով աղջիկը մաքրում է իր նախկին կեանքից: Ապա նորեկը մօտենում է, երկրպագում օջախին և համբուրում է այն: Կատարուում են նորանոր զոհաբերութիւններ ու աղօթքներ, Այստեղ աղջիկը մտնում է մի նոր ընտանեական կրօնի մթնոլորդ, նոր գերդաստանական նախահայրերի հաւատի ազգեցութեան տակ: Նրա առաջ մի նոր օջախ է կանգնած նոր պաշտամունքով: հարկաւոր է կապուել այդ նոր օջախի հետ, հայցել նրա հովանաւորութիւնն ու գութին իւր վրայ, պէտք է աղօթել ու խընդրել, որ այդ օջախն ընդունի նոր հարսին, իբրև ընտանիքի մի նոր հարազատ զաւակի:

Ահա այսպիսի մի խորհրդաւոր ծիսակատարութիւն պահպանում է հայ սովորութական իրաւունքի մէջ և յիշեցնում է մեզ հին լաթինական traditioն և confarreatioն:

Փանձակում, երբ հարսին տանում են հօր տանից դէպի փեսայի տունը, հետևեալ ծէսն է կատարուում: հարսը շրջապատուած իւր ընկերուհիներով դուրս է գալիս իւր առանձնարանից և մօտենում է տան օջախին, ծունք է խոնարհում նրա առաջ և մի քիչ մոխիր վերցնում: Հարսի հայրը բոնում է աղջկան ձեռքից և յանձնում է փեսի հօրը, իսկ փեսան կանգնած է լինում հարսի մօտ: Աղջիկը ու փեսան ձեռք ձեռքի տուած պտտում են թոնրի

շուրջը և ապա համբուրում. այսոնեղ աղջիկը վերցնում է հօր տան թոնրից մի բուռ մոխիր և լցնում գրպանը. ուրիշ հայ գաւառներում, ինչպէս Վարանդայում, մոխիր վերցնում է փեսան աղջկայ հօր տանից և լցնում իր գըրպանը: Այս նկարազրած ամբողջ սովորութիւնը գրեթէ նոյնութեամբ կատարւում է ու պահպանւում մինչև այժմը գրեթէ բոլոր հայ գիւղերում:

Այսուհետեւ, երբ հարսը մտնում է փեսայի տունը, հարս ու փեսան նախ և առաջ դիմում են օջախին կամ թոնրին. երեք անգամ շրջում են նրա չորս բոլորքը, ապա չորում ու համբուրում են: Այսուղ հարսը, կամ եթէ փեսան ունի գրպանում մոխիր, ածում է հօր տանից բերած մոխիրը թոնրի մէջ: Շատ անգամ էլ հարսը իր հետ խունկ է բերած լինում, որը նոյնպէս թափում է թոնրի մէջ:<sup>1)</sup> Այդ միջոցին փեսայի ծնողները մօտենում են և հենց այդ օջախի մօտ օրնում են նորապասակներին և իրենց ծնողական իրաւունքով նորահարսին համարում են տան հարազատ, նոր օջախի անդամ, որ անարգել ու անվախ ծառայելու է նոր օջախին ու մասնակից է լինելու նոր օջախի և սրա հիմնադիր նախահայրերի պաշտամունքին:



1) Ե. Լալայեան. Գանձակի գաւառ.